


Պ. Ա. Յ. Մ. Ա. Ն. Բ.

Հ. Ա. Ս. Ե.

Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 Ձր.
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Երկու քիչը մեկ ծրարով
Տարեկան 14 Ձր.
Վեցամսեայ 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօր.
Վեցամսեայ 1.50 Տօր.
ԿԱՆԿԻԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarië) VARNA

РЕДАКЦИЯ

ВЪ ВѢСТНИКЪ

«Иравунк»

НАРНА

Գրութիւնք եւ չին
տրուիր

ՃԾԱՍՐԻՏ ՈՒԺԸ

Մեր ազգին մէջ դժբաղդու-
թիւններէն մէկն ալ այս եղած
է որ, իր գրագէտները, ուսու-
ցիչները, քահանաները, վարդա-
պետները և բոլոր այն մարդիկը,
որոնք ազգային գործիչ եղած են
իրենց կեանքովը, վարժունքովը
ու բոլոր գործերովը հակառակ-
ներ գարցած են իրենց քարո-
զած գեղեցիկ սկզբունքներուն
Անոնք խիստ աննշան բացառու-
թեամբ մը՝ բնաւ չեն փայլեցու-
ցած իրենց անձին վրայ այն
բաները որոնց քարոզիչները ե-
ղած են՝ գրով ու խօսքով. Հոս
վարդապետ մըն է որ, բարոյա-
կանի, անկեցծութեան և այսօրի-
նակ գեղեցիկ բաներու վրայ
բարձրէն կը քարոզէ Ս. բեմէն
և դուրսը խոշոր ու գնչուի մը
անգամ աններելի սուտեր կը խօ-
սի, որոնք յետոյ երեւան կելնեն
երբ արդէն ինք չուած է զէպի
նոր աշխարհ. գողութիւն, յա-
փշտակութիւն կրնէ. իր նշքոր
կինը զլիւս կը հանէ, իր Ս ուխ-
տին զէմ կը գործէ և այլն և այլն.
Հոն «նրքաթիւթիւ» կամ «նե-
րուժ» գրագէտ մըն է, որ իր
բոլոր արուեստը կը թափէ հայ-
րենասիրութեան, անձնութեան
թեան, հայ ազգային մաքուր կու-
սութեան և այլ այսպիսի վսեմ
բաներու վրայ կը խօսի. ու ինք
ոչ միայն մատին ծայրը չարիւ-
նէր՝ գործնական ապացոյց մը
տալու համար թէ ինք կը հաւ-
տայ իր ըսածներուն՝ այլ իր լի-
առատ վարձքէն, որ կստանայ
արիւնքաթիւթ հաւաքուած դը-
րաքներէն՝ սանդիմ մը իսկ չի
զեղչեր որպէսզի չըստիպուի իր
սրիկայ հաճոյքներէն բան մը
զոհելու. և ան այդ սրիկան, այդ
հայ կուսին սրբութիւնը վարձկա-
նօրէն երգողը, չամշար զոյգ զոյգ
բողբոլով նստիլ գոյգ զոյգ բո-
ղբոլով գիշերել և չեղած խայտա-
րակութիւններ ընել. Ասորի մէկ
ուրիշը 10ը տարի չարունակ խո-
շոր խոշոր և չարանպատակ սու-
սեր գրելի, երկրին մէջ իր պատ

կանած կուսակցութեան հարիւր
հազարներով հրացաններ մը-
ցուցած ըլլալը խորխոր ու յան-
դուկն չեղտեալով պոռալէ վերջ
այսօր ալ ինք անձամբ կը հեր-
քէ ըսածները ու խաբէութեան
նոր ձեւով մը հրապարակ եկած,
կուզէ իր զեղծարարութիւնները
ծածկել նորատեսակ բարենորոգ
չական քարոզներով, որոնք իբր
թէ ազգը կամ յեղափոխութիւնը
փրկելու համար կընէ, ու այս
նոյն անձը որ դեռ երեկ ուրիշ-
ներու գեղծութիւններ քննադատե-
լով կըսէր «բաւ թութեան բար-
մաղունու եալար», ինք սակայն
ամբողջ մարմնովը բալարին ու
բէքմէզին կարասին մէջ մըտ-
նելով ելնելով իր ամեն կողմը
բալար եղած տարիներէ ի վեր
կը լիւզէ ու կը լիւզէ եւ վերջա-
պէս աւելի ազգին դպրոցի մը
ուսուցիչները, որոնք տարիներէ
ի վեր չորս խոշոր լեզուներ կը
դասախօսեն և դեռ պախալի մը
չրախութիւնը ընելու չափ կա-
րող տղաք չեն հասուցած՝ կը
պատուիրեն տղսք որ սիկառ չը
խմեն վասնզի գէշ բան է, քիւս-
սակար է և այլն ու իրենք դըպ-
րոցին, դասարաններուն մէջ
առտուանէ մինչև իրիկուն սիկառ
կը ծխեն ու խեղճ տղսք ծծելիք
օդը կապականեն. դասարանին
մէջ բան պէտք չէ ուտել կը
պատուիրեն տղսք ու իրենք գրո-
պանին ուտելիքի դարան մը
դարձուցած դասախօսութեան
միջոցին մէկ կողմէն իբր թէ
դաս կուտան միւս կողմէն ալ
գրպաննուն հանելով մըլը մըլը
կաղան չաղացքի մը պէս.
Ահա այսպէս մեր գործիչները
աննշան բացառութեամբ ինչ որ
քարոզած են միշտ անոր հակա-
ռակը գործած են. գողութիւնը
սճիր է կը պոռան, ու իրենք
ամենէն առաջ կը գողնան. բար-
ձր ըլլալու է կըսեն, իրենք սա-
կայն միշտ ստոր գործեր կը
ենեն.
Ի՞նչ եղած է և ի՞նչ կրնայ
ըլլալ ասոնց վախճանը — ասոնց
վախճանը ու արդիւնքը այս ե-
ղած է որ, ժողովուրդը դարձած

է կեղծ քրիստոնեայ, կեղծ բա-
րոյականի տէր, կեղծ ազգասէր,
կեղծ բարերար կեղծ կեղծ և
կեղծ վասնզի իր մարդիկը, ը-
սել կուզեմ իր գործիչները կեղծ
էին. Պատմութեան մէջ կը տես-
նանք որ միայն այն գործիչնե-
րը կըրցած են ազգել ու յեղա-
շրջել սերունդները՝ քարոզուած
սկզբունքներու համաձայն՝ որոնք
իրենց անձին վրայ փայլեցու-
ցած են զանազ. ասկէ դուրս
ճշմարտութիւն չի կայ. հակա-
ռակ պարագային անոնք դերա-
սաններ են, որոնք մէկ կողմէն
իրենց կեանքովը ազդեցութեան
մէջ կը լողան միւս կողմէն բեմի
վրայ կը ներկայացնեն վեհանձն
հայրը, ճշմարիտ սէրը, մօր գո-
րովը և այլն և այլն, ինչ որ եր-
բէք չաղելու ու չիպիտի ազգէ
ալ՝ երբ դերը կատարած միջոցին
ամենուն միտքը պիտի գայ որ
այդ դերասանը վեհանձնութիւն
կը ներկայացնէ՝ ինք ստորին
փոքրօրի մըն է. ճշմարիտ ուժը
անձին օրինակն է. առանց այդ
ուժին արուեստի ուժով խօսուած-
ները, խուսածները կը մնան ու
պիտի մնան «ձայն բարբառոյ
անապատի». Գրագէտ Սրբանձ-
տեանց որ նէրսէս Ասլանեանէն
անհամեմատ աւելի գրագէտ էր
և պերճախօս՝ անկարող եղած էր
իր առաջնորդութեանց մէջ բան
մը ընելու և բան մը չընելէ զատ
գէշ բաներ ալ ըրած է, վասնզի
ինքն իր քարոզներուն ճիշդ
մարդը չէր՝ ներսէսը որ գրա-
գէտ չէր և նուրբ կրթութեան
ալ զուրկ էր՝ չատ օգտակար ե-
ղած է ու խորապէս ազդած ու
ներգործած է իր հովուած ժո-
ղովուրդին մտքին ու նկարա-
գրին վրայ. որովհետեւ այդ բիրտ
եկեղեցականը զոհողութիւն կը
քարոզէր ու ինք ամենէն առաջ
կը զոհէր, անկախ նկարագրի կը
քարոզէր և ինք անձամբ կը փայ-
լեցնէր իր անձին վրայ. հաւա-
սարութիւն կը քարոզէր և իրաւ-
ցնէ հաւասար կը չարժէր ինչ-
պէս ազգի նոյնպէս և սովորա-
կան անհատի մը հետ՝ ճշմարիտ
ուժը անձին օրինակն է.
ՄՏՐԱԿ

ԴՈՐՈՒՄԻՆԻԼ ԵՒ ՏՈՒ
Տեառնըդառաջի տօնին և իշ-
խանին ծննդեան տարեդարձին
առթիւ չորեքշաբթի օր Իրաւունք
չը հրատարակուեցաւ, մանաւանդ
թէ ինչպէս պուլկար տպարան-
ները նոյնպէս ալ մեր գրաշար-
ները գործադուլ ըրած էին.

ՍՈՒԶՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ
Ռուսացի Պատ. Թագ. Խորհուր-
դէն սա հեռագիրը եկած էր տեղւոյս
Թագականութեան.
«Պուլկարայի ժողովրդեան որոշ-
ման եւ խնդրանաց համաձայն վեճա-
կիս մէջ արդէն ունինք Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսի կարող ներկայացու-
ցիչը.
«Այսօր հեռագրաւ բողբոջեցին ի
Պատրիարքարան իւր էնթրիքան ըն-
թացքին զէմ, Հովիւ զրկելու հրամանը
բեկանելու.
«Այս կիրակի ընդհ. ժողով պիտի
ունենանք. վերջնականապէս որոշելու
մեր դիրքը, իրաւասութեան տեսակէ-
տով և վերջ ալ այս անորոշ վի-
ճակին. Մենք որոշեցինք Կաթողիկո-
սի վեճակը դադար.
«Կաղաչենք ձեր աջակցութիւնը այս
մասին մեր օրինակին հետեւելով»
Ստորագր. Թագականներու

Վասնայի Թագ. Խորհուրդը՝ որ ար-
դէն այս գաղափարը գործնական հողի
վրայ գնելու նախաձեռնութիւնը ըս-
տանձնած էր ժողովրդեան միջինկի մը
պահանջին վրայ, յետ խորհրդակցու-
թեան կիրակի օր որոշեց նախկաւ մը
խնդրել պատրիարքարանէն որ չը գրկէ
իր կարգած հոգեւոր հովիւը, որուն զէմ
ժողովուրդը տեղը վարժուած մը ու-
նենալու տրամադրի կերելի.

Կաթողիկոսական նուիրակ Տ. Տա-
ճատ վրդ. երկուշաբթի օր քաղաքս
ժամանած ըլլալով, չորեքշաբթի ա-
ռաւտ Տեառնըդառաջի տօնին առթիւ
եկեղեցին հաւաքուած ժողովուրդը երբ
իմացաւ վարդապետին եւրոպա մեկ-
նելու որոշումը՝ առաջնորդական ընտ-
րութեան գործը չը կատարած, հա-
ւաքուեցաւ ազգ. վարժարանին մէջ եւ
բացատրութիւն խնդրեց Հայր Ս. Բ.
բէն. նորին արժանապատուութիւնը
էջմիածնէն ստացուած քանի մը թուղ-
թեր ցոյց տալով, յայտնեց թէ հարկ

է որ մեկնի Պուլկարիայէ: Ներկաները չառ ճիգ թափեցին զանի համոզելու որ միայն բայց Տ. Տաճատ վրդ. պընդեց իր մեկնումի անհրաժեշտութեան վրայ:

Խնդիրը անորոշ մնալով, ժողովուրդէն ամէն կուսակցութեան եւ չէզոք դասակարգին պատկանող մաս մընոյն որը ժամը 5ին կրկին հանաքուեցաւ: Եկեղեցւոյ խորհրդարանը՝ գնահատեց կիրակի օր թաղ. Խորհուրդին Պատրիարքարան գրած վերոյիշեալ նամակին պարունակութիւնը, եւ խնդրեց Տ. Տաճատ վարդապետէ որ իր մեկնումը քանի մը օր յետաձգէ: Բայց Հայրապետը անպատճառ առաւօտեան մեկնելուն վրայ պնդեց, խոստանալով որ երբ Պուլկարահայ ժողովուրդը միահամուռ բաղձանք յայտնէ եւ վեհ. կաթողիկոսը հրամայէ ինք պատրաստ պիտի գտնուի Պուլկարիա վերադառնալու:

Ներկայ ժողովուրդը տեսնելով թէ անկարելի է վարդապետը համոզել, որոշեց միաձայնութեամբ որ հետեւեալ քանակներէ համեմատ ինք գործէ:

«Ի ներքոյ ստորագրեալքս այս առաւօտ իմանալով թէ վեհ. կաթողիկոսին Նուբարկ Տ. Տաճատ վ. Մելքոնեան որոշած է մեկնիլ արտասահման, հաւաքուեցաւ ի թաղ. Խորհրդարան, բացատրութիւն ուղեւորութիւնը կր մեկնիլ առաջնորդական ընտրութիւնը կատարելէ առաջ:

«Հայրապետին մեզ տուած բացատրութիւնները եւ ցոյց տուած տօքիւմանները համոզում դոյացուցին մեզ թէ՛ ինկատի ունենալով Պարիարքարանի պնդումներուն վրայ եղած հայրապետական կարգադրութիւնը, թողնելու առաջնորդական գործը եւ մեկնելու արտասահման եւ ինկատի ունենալով ժողովրդի տառանդ կամքը այդ խնդրի նկատմամբ ստիպուած է մեկնիլ:

«Ներկաներս եկեղեցական օրէնքով եւ Պուլկարիոյ սահմանադրութեան մեզ տուած իրաւունքով՝ ոտնձգութիւն կը նկատենք Պատրիարքի այդ պահանջը մեր ազատ կամքին դէմ: Ուստի կորոշենք խնդրել տեղւոյս թաղ. Խորհուրդէն ըստ նախկին միջնորդի որոշման հաստատութեան չարունակել առաջնորդական ընտրութեան ամբիւրս սկսած գործը, դուրս գալով Պատրիարքական իրաւասութեանէն, ենթարկուիլ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան իրաւասութեան իրեն ուրոյն անկախ ազգային եկեղեցական համայնք, եւ նոյնը յանձնարարէ քոյր թաղականութեանց որ Պուլկարիայէ համոզուեն որ արգեն իրենց նախկին որոշումը եւ ամաճայնութիւնը, որոյ համեմատ թել տրուած է Տէր Տաճատ վրդ. Մելքոնեանը իր պաշտօնը կատարելու համար, որով յիշեալ թաղականութեանց նահանջիլը ծանր նախատինք մը չպիտի լինի թէ՛ Մայր Աթոռոյ եւ թէ՛ նոյնպէս իրենց համայնքին:

Ստորագրութիւններ
Վառնա, 14 Փետր.

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՎԵԱՆՆԵՐՈՒ

Ահաւաստիկ պատճէնը այն չըր-
ջաբերականին, զոր Պոլսոյ Պատ-
րիարքարանը զրկած է կարգ մը
հայաբնակ կեդրոններ, ինչպէս
նաեւ մէկ քանի թաղ. Խորհուրդ-
ներու:

ՊԱՏՃԷՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՆ

ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ՆԱՅՈՑ

հաւատ 171

Կ. Պոլիս 25 Յուն. 1907

Պատ. Անդամք

Թաղ. Խորհրդոյ Ս. Եկեղեցւոյն
Վառնայի

Գաւառներու մէջ այս տարի խոր-
շակ, կարկուտ ու մարախ չբացուցին
հունձքերը, ու երկրագործները տա-
ժանելի աշխատանքներէ ետք իրենց
տեղերը դարձան՝ ձնառնւանայն ու ճա-
րհատ: Զրկուածով ու խոտաբուստ սը-
նունդով կցցին տոկալ ամիսներ, բայց
ձմեռը՝ որ սաստկացունչ կը տիրէ
դուրսերը, յեցուց իրենց չքաւորու-
թեան չափը, հացը սղեց տարապայման,
նոյնիսկ բոլորովին պակսեցաւ տեղ
տեղ, այլեւս կարօտեալք անօթութենէ
հայտնուած: Առաջնորդարաններ կը
դիմեն օգնութիւն ձեռք բերելու, եւ
Առաջնորդարանք ալ թախանձաղին եւ
ստիպանք պատրիարքարանէն կը հայ-
ցեն հացազին հասցնել, որ կարօտեալք
չկորսուին սովամահ:

Մեր նպատակը անտուկին հասոյթ-
ներն սպասած են գլխովին եւ կը պակ-

սին մեզ կատարելապէս կարօտելոց
օգնելու միջոցները, բայց գիտենք թէ
չ'պակսիր բարեգործ հոգիներու գումար
մշտաւարելու վրայ. չ'պակսիր անոնց
ողորմութեան լուսան, որ շատ ան-
գամ զգացուցին կը բղիթ՝ քսն կարօ-
ղութենէն: Ուստի՝ ինչպէս ուրիշ քա-
նի մը վիճակաց Առաջնորդներուն,
նոյնպէս եւ Ձեզ կը յանձնարարենք որ
Ձեր վիճակին մէջ գտնուող կարող
ազգայիններէ պատշաճ եղանակաւ նը-
պաստ խնդրէք այս կարօտելոց համար,
եւ նուիրատուներու ցանկին հետ մեզ
յուզարկէք:

Վստահ լինելով որ մեր յանձնարա-
րութիւնը փութով կը կատարէք եւ
արդիւնաւոր գործելու կաշխատիք:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կ Պոլսոյ

ՄԱՂԱԿԻԱ ԱՐԲԵՐԱԿԱՆՈՒ

Տեղւոյս Պատ. Թաղ. Խորհուրդը
նկատի առնելով այս շրջաբերա-
կանի սրտամոռմոք պարունակու-
թիւնը, որոշեց թէ եւ հանգանա-
կութիւն մը ընել յօգուտ Հա-
յաստանի կարօտեալներուն, բայց
կանխաւ որոշուած ըլլալով պա-
րահանդէս մը տալ ամսոյս 25ին
տեղւոյս Ազգ. վարժարանին ի
նպաստ, ստիպուեցաւ սովելոց
հանգանակութիւնը մարտ ամ-
սոյն յետաձգել, որպէս զի սա ար-
գելք չըլլայ պարահանդէսին ար-
գիւնաբերութեան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԼԷՄԱՆԹԻՆ ԻՆԽՈՒՆՈՒՂԻՈՑ



Կանխաւ ծանուցուածին համաձայն
կիրակի առաւօտ քաղաքիս Ս. Սար-
գիս եկեղեցւոյն մէջ մասնաւոր Պա-
տարագ եւ հոգեհանգստեան պաշտօն
կատարուեցաւ նորոգ հանգուցեալ իշ-
խանուհի Գլէմանթինի հոգւոյն հա-
մար:

Թաղ. Խորհուրդի կողմէ զրկուած
հաւիրագիրներուն համեմատ եկե-
ղեցական արարողութեանց ներկայ
գտնուեցան էվթերիոսիքաւ իշխանա-
կան պալատին ընդհ. կառավարիչը եւ
ուրիշ երեք պալատականներ, երկու
ղորագունտներու հրամանատարները,
Վառնայի Տ. Նահանգապետի կողմէ
քարտուղարը, ոստիկանապետը, պուր-

կար վաճառականներ եւ մի քանի տի-
կիներ: Իսկ հայ ժողովուրդը ներկայ
էր խուռն բազմութեամբ, որուն մէջ
կը տեսնուէր բացառաբար քաղաքիս
հայ վաճառականոց դասը:

Եկեղեցական արարողութիւնը սո-
վորականէն շատ չքեղ կերպով կա-
տարուեցաւ, երգեցողութիւնները դաշն
եւ քաղցրալուր էին չնորհիւ կանխաւ
եղած պատուէրներու: Պատարագիչ
քահանայ, տէր Արիստոքոմ Թորոսեան
հոգեհանգստէն առաջ պարադային
խիստ պատշաճ եղանակաւ մը քարո-
զելով, դրուատեց հանգուցեալ իշխա-
նուհոյն բարեմասնութիւնները իբր
առաքինի եւ մարդասէր կին մը եւ օ-
րինակելի տիպար մը ազնուականու-
թեան (*): Յետոյ Հոգեհանգստի պաշ-
տօնը սկսաւ ամենայն հանգիստօրու-
թեամբ. ներկայ օտարականները եւ
հայ ժողովուրդը տկնածանք ու եր-
կելաճութեամբ ունկնդրեցին արարո-
ղութեան ամբողջ տեւողութեանը: Թա-
է ըսել որ քաղաքիս պուլկար մէջ-
թօթիւրը եւ լատին եկեղեցւոյ ժողո-
վորդապետը չէին հաճած իրենց ներ-
կացուցելիքները զրկել՝ հրաւեր ըն-
դունած ըլլալուն հակառակ, մինչդեռ
մեզմէ քահանայ մը եւ հոգաբարձու-
մը՝ ըստ ընկալեալ հրաւերի՝ զացած
էին լատին եկեղեցին քանի մը օր ա-
ռաջ նոյն Հոգեհանգստեան արարողու-
թեան ամբիւրս:

Եկեղեցւոյ արարողութեանց աւար-
տումէն յետոյ, Թաղ. Խորհուրդը հե-
տեւեալ ցաւակցական հեռագիրը ուղ-
ղեց իշխանին, Վիեննայի Գոգուրկ
պալատը:

Ն. Ա. Բարձր. Իշխանի Պուլ-
կարիոյ

Վառնայի հայ հասարակու-
թիւնը ներկայ լինելով այսօր
իր եկեղեցւոյն մէջ, Ձեր Ա.
Բարձրութեան անմոռանալի եւ
ողբացեալ մօր Գլէմանթին իշ-
խանուհոյն հոգոյն համար մա-
տուցուած պատարագին եւ հան-
գիսաւոր հոգեհանգստեան պաշ-
տօնին, խիստ զգածեալ, ամենա-
խորին յարգանք համարձակու-
թիւն կառնու իր սրտագին ցա-
նակցութիւնը յայտնելու Ձերդ
Ա. Բարձրութեան եւ Օգոստոսիաւ
գերդաստանիդ:

Ատենապետ

ԻԱԶԻԿ ԱԶՆԱԿՈՐԵԱՆ

(*) Բարոյը յաջորդով կը հը-
րատարակենք:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

53

ԱԽԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՎՐԵԹԸ

(Շար. Նախորդ Թիւէն)

Աւազակապետը դառն բայց գոհու-
նակութեամբ լի ժպիտ մը թրթռաց-
նելով իր գողոջուն չրթանց վրայ,
ըսաւ:

— Մտիկ ըրէք, մուստ պէյ, դուք
ձեր խղճին, ձեր Աստուծոյն առջեւ
մեղապարտ կը մնայիք, երբ արգա-
րութեան ձայնէն թելադրուած չըլլա-
յիք: Մարդուս խղճը, մարդուս Աս-
տուծ իր ներքին ձայնն է... Ար-

դարեւ, չը գիտեմ թէ ձեր անցեալ
պատմութիւնն որ աստիճանի աղէ-
տաւոր կըլած է, միայն թէ երբ այդ
տարիքիդ մէջ՝ որ գերեզմանի մը ցուրտ
փսփոս վրայ կըլած է, ձեռքերիդ կեր-
կընցուէ՞ք մարդու մը արիւնը թա-
փելու, այն ալ ստրկացած ու ինկած
կեանքով մը աղջկան համար, դուք
չարութեան եւ կամ թէ անձնական
ոխի մը նենգալի երեւոյթը չուիք...
ընդհակառակն, ինծի պէս թշուառ
Քաթիբի մը հիացման արժանի կը
դառնաք: Ես միւսելումն մըն եմ...
բայց կատեմ այն բոլորը զոր միւսել-
մանութեան ոգւոյն հակառակ է: Մարդ
ըսածդ՝ ինչ ազգի, ինչ ժողովուրդի եւ
ինչ ցեղի որ պատկանի, դարձեալ բա-
րի Աստուած մը ունի... անոր սիրելի
ըլլալու համար, պէտք է արդար ըլ-
լալ մեր բովանդակ գործունէութեանց
մէջ... Միթէ՞ դուք չէրէքք մը ըլլա-
լով, միեւնոյն հօրը զաւակը չէ՞ք,
միեւնոյն Աստուծոյ ստեղծածը չէ՞ք:

— Ինչպէս չէ... քանի որ կը հա-

ւատանք թէ Աստուած մէկ է եւ Ան
բովանդակ տիեզերաց տէրը, պէտք է
հաւատանք թէ մարդիկ անոր զաւակ-
ներն են, կրկնեց մուստ պէյ հաստատ
ձայնով մը: Միայն թէ՛ այն զաւակ-
ներու մէջ չարագործ ձեռքեր կան...
մեր պարտականութիւնն է ոչնչացու-
նիլ զանոնք որպէսզի աճելու ժա-
մանակ ունենան միայն բարի հոգի-
ներ...:

Պատկերութիւնը չէր վերջացած, ա-
հա ձայն մը լսուեցաւ հարեմանոցին
խորէն: Հրացանի պայթիւն մըն էր,
որ սարսեց ապարանքին ամբողջ շէն-
քը:

Պուստ պէյ աճապարանքով մը
դուրս նետուեցաւ սենեկէն ու դէպի
հարեմանոցը դիմեց:

Ապարանքին բոլոր ծռռանները Ձահ-
րումարին սենեակը կը վազէին:

Պուստ պէյ անոնց ետեւէն գնաց
ու մտաւ ներս:

Աղետալի՜ տեսարան...
Մանկամարդ չէրէքուհին ինկած

էր բազմոցին վրայ ու անոր կուրծքէն
արիւն կը վազէր հեղեղի պէս:

Փռն տեղ չուրջ հաւաքուողները
կը ջանային վերակապներով կուրծքին
մէջտեղ բազուած հազգին վէրքը դո-
ցել... անկարելի էր:

Ձէրէքուհին, որ Ձահրումարն էր
աչքերը կիսովին փակած, քնքուշ զը-
լուխը վար ձգած՝ ճղակաւոր վարդի
կոկոնի մը նման, մէկ թեւը ներքե-
նիներու վրայ նետած ու միւսը բազ-
մոցին վրայ թողած, հեռուէն մահա-
մերձ վիճակ մը կատանար ու կը կուր-
անցունէր իր գիտակցութիւնը...:

Կէս ժամէն թիշիւր հասաւ:

Եւրոպացի գիտնականը զսղդալով
մանկամարդ աղջկան բազկերակը քն-
նելէն ետքը, պահ մը կեցաւ ու մըր-
մնջեց:

— Վիճակը ծանր է... գնդակը ճեղ-
քած է ճիշտ սրտին մէջ տեղը... յոյսը
միայն Աստուծոյ վրայ մնացած է:

Ոն վերակապներով փաթթուած
վէրքը բանալ տուաւ եւ աւելի մա-

ԱԶԱՏԱԿԱՆ ԹՈՒՐԳԵՐԸ

—*—*—

Գահիրէի մէջ լոյս տեսնել սկսեց Եռնաքի Օսմանի անուն կիսամսեայ հրատարակութիւն մը ազաական թուրքերու ձեռքով և թուրքերէն ու ֆրանսերէն լեզուներով: Ազաքի Բեմ այս հրատարակութեան առաջին թիւէն կը քաղէ հետեւեալ տողերը: «Մենք կազմած ենք օսման Օսմանադրական դաշնակցութիւն մը, անոր նպատակը այնքան պարզ է, որքան վսեմ: Ժամ քաղ ձեռք բերել լայնորէն սահմանադրական ղեկավար մը, որ մեր փրկութեան միակ միջոցն է, ճեղային և կրօնական ամէն խտրութիւն հեռու մեղմէ: քաղաքականապէս խոսելով, իշխող տարր դոյութիւն չունի: չըկայ հպատակ ժողովուրդ: օսմ. կայսրութեան իւրաքանչիւր քաղաքացի ունի միեւնոյն իրաւունքները և յարեւման պարտականութիւններ: հանգէպ հասարակաց հայրենեաց: Մինչեւ ցարդ, ներկայ բռնակալ ղեկավար ատելութիւն սերմանած էր զանազան ցեղերուն և կրօնքներուն միջեւ: Մենք այդ իրերամարտ տարրերուն պիտի ցոյց տանք չարիքը և անոր աղբիւրը: Մենք հաւատք ունինք մեր անձնաւորութեան, անկեղծութեան եւ մեր հայրենակիցներուն ողջամտութեան վրայ: մենք կը տեսնենք որ մեր հայրենակիցներուն թշուառութեան սահմանը ալ չատ անցած է: երբ ազգ մը ազատագրութեան կը ցանկայ, ամէն ճամբայ զինքը դէպի հոն կառաջնորդէ: Մեր խեղճ հայրենիքն աւերող զգուհի բռնակալութիւնը բացած է ամենէն անպարտաւորութիւնը աշխարհ: մենք այլեւս չպիտի կրնանք ապրիլ եթէ չմիանանք բոլորս, իսլամներ և ոչ-իսլամներ՝ օսման կայսրութեան...»

Կը մաղթենք որ այս պովելի անխտրականութեան ոգին ու գիտակցութիւնը ընդհանրանայ մեր թուրք հայրենակիցներուն մէջ: Առանց այդ ընդհանրացման մեզ չեն կարող վստահութիւն ներշնչել միայն մէկ քանիներու կողմէ թուրքի վրայ եղած արտայայտութիւնները ու թուեցիկ խօսքերը, երբ անդին միլիոնաւոր իսլամ մուսուլմաններ ամբողջ մեզ մը ջարդէ պարզապէս միայն հայ կամ քրիստոնէայ ըլլալուն համար: և տղայութիւն է ոմանց պնդելը թէ թուրք ժողովուրդն ալ մեզ հաւատար կը տառապի: սա իրականութիւնը չը ճանչնալ է:

ՇՈՒՄԼԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԻԹԻՆԿԸ

—*—*—

Տեսնելով որ Պուրկարահայոցս առաջնորդական ընտրութեան աթիւն վեհ. Հայրիկի կողմանէ զրկուած Գեր. Տ. Տաճատ վարդապետի Պուրկարի ժամանկէն ի վեր Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարանը թուրք կառավարութեան փողոսը ձեռքացած՝ ամէն տեսակ անազնիւ խարդաւաններ ի գործ կը դնէ: և կը ջնջայ, հակառակ Պուրկարահայոցս բողոքներին: իր ներկայացուցիչը զրկել հոս, Եւ. միայն հայ գաղութը միթիւն մը սարքեց այսօր, 4 փետրուար, ժամը 10ին: Ազգ. վարժարանի սրահին մէջ՝ բողոքելու համար Պատրիարքարանի ապօրէն ընթացքին դէմ: Նկատելով որ Պատրիարքարանը միշտ թոյլ յարաբերութիւն ունենալով Պուրկարահայոցս հետ՝ բոլորովին անփոյթ զանուած է մեր կրթական եւ կրօնական գործերու հանդէպ: Նկատելով որ Պատրիարքարանը, հակառակ բովանդակ ազգին ըզմանքին ամէն աթիւն թուրք կառավարութեան ճնշման եւ թելադրութեան տակ կը գործէ: Նկատելով որ—ինչպէս 1903ի առաջնորդական ընտրութենէն յայտնի է— Պատրիարքարանը երբեք չկարողանալով առաջուր կոխել թուրք կառավարութեան յարուցած խռնակները, չպիտի ապահովէ օրինաւորապէս

ընտրուած կարող փորձ եւ բանիբուն առաջնորդի մը գործունէութիւնը: Նկատելով որ Պուրկարահայերը, առաջնորդական ընտրութեան աթիւն, էջմիածնի հովանաւորութեան ներքեւ անցնելու միտում ցոյց կուտան: Նկատելով որ Պուրկարահայ գաղութը էջմիածնի իրաւասութեան ենթարկուելով, պիտի կարենայ ազատօրէն իր կրթական եւ կրօնական գործերը բարելաւել: Նկատելով որ Պուրկար կառավարութիւնը հայոցս նկատմամբ գնահատելի եւ համակրական տրամադրութիւններ տածած է, այնպէս որ կարելի է ներկայիս մէջ, աթիւնն ոգտուելով առաջնորդական խնդրը մեր փափաքին համաձայն լուծել: Եւ. միայն հայ համայնքը, իր միթիւնին մէջ, կարծիքներու փոխանակութիւն ընելէ ետքը, միաձայն ըզմանք յայտնեց որ առաջնորդական ընտրութիւնը կատարուի վեհ. կաթողիգոսի կողմանէ զրկուած Գեր. Նուրիակին միջոցաւ եւ Պուրկարահայ գաղութը, այսուհետեւ, Ամերիկայի եւ եւրոպայի հայ գաղութներուն պէս, էջմիածնի թիւ համարուի:

Իր նպատակին իրագործման աշխատող Նորին Ս. Օծութեան եւ Պուրկար կառավարութեան մօտ իր իղձերուն թարգման ունենալու համար, միթիւնը յանձնախումբ մը ընտրեց հետեւեալ եօթը անձերէն:

Ս. Պոյաճեան Գ. Սամուէլեան
Ա. Կարապետեան Պ. Էսաբաշեան
Թ. Կարապետեան Ա. Եաճեան
Վ. Տաքսեան

Միթիւնը նկատելով առաջնորդական հարցին ընդհանուր հանգամանքը, ուզեց հասու ըլլալ պուրկարահայ միւս համայնքներուն տրամադրութեանց: Ուստի որոշեց իր բողոքները անոնց յայտնել՝ պուրկարահայ մասնիկին միջոցաւ:

Ի դիմաց Մասնախմբին
Վ. Տաքսեան Ս. Պոյաճեան
Եւ. միւս 4 փետրուար

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայէ մեզ կը գրեն 20 փետր. թուականաւ

«Այսօր տեղւոյս բոլորէինք ի գաւառ. ինժինէօք Տիար Թ. Սեդ-

րակեան և Տիար Ռ. Գուլումճեան հանգուցեալ իշխանուհիին դադարին վրայ դրին գեղեցիկ պըսակ մը, Պուրկարիոյ հայկական գաղութին կողմանէ:»

Տ. Սեդրակեանի և Տ. Գուլումճեանի այս հոգածու վերաբերումը բոլոր Պուրկարահայերս չափազանց գոհ և շնորհակալ կը թողու:

—Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին Տնօրէն Նշանակուած են Հ. Արիստակէս Վ. Գասգանտիլեան և Հ. Սիմօն վրդերամեան:

—Ամերիկայի Ուէսթ Հոպօքընի մէջ կառուցուած Ս. Խաչ եկեղեցիին սրբագործման և օծման արարողութիւնը կատարուած է յունվար 27ին Տէր Յովսէփ արքեպ. Սարաճեանի նախագահութեամբ: ներկայ եղած են 500է աւելի գաղթական հայեր:

Այդ նորակառոյց եկեղեցին 3000 տոլար արժող գետնի մը վրայ շինուեցաւ 11000 տոլար ծախքով: այս գումարին 7000ը հանգանակութեամբ հաւաքուած է և մնացեալ 4000ը տոկոսով աւճուած: Այս երրորդ եկեղեցին է որ կը կառուցուի Ամերիկայի մէջ. առաջինը Ուստրի Ս. Փրկիչը երկրորդը Ֆրէշօյի Ս. Երրորդութիւնը:

—Մարսիլիոյ Թադ. Խորհուրդը եւս Պատրիարքարանէ մտացած պաշտօնագրին համաձայն՝ տնօրինած է որ տեղւոյն Տ. Յովհան Ա. քահանայ հանգանակութիւն ընէ ի նպատակ Հայաստանի սովեակներուն:

—Պաթուի մէջ այրած է Մանթաշեանի արկղիկներու գործարանը, որ չորս ընկերութիւններէ ապահովագրուած է եղեր:

—Նախիչևանի և Ռօստովի Գատէթներու և Սօսիալ-տէմօկրատներու պլոգը Տոււայի անդամ ընտրեց է Մովսէս Աճէմիանը: Կարսէն ալ Տոււայի անդամ

Այսպէս, մոռացութեան տրուեցաւ այդ եղբորական տրամալ: Ու միայն, աւա՛ղ, միայն մէկը կար որ լացաւ այդ եղբունական զէպքին աթիւն:

Ատիկա Ֆուատ պէյն էր: Զմարիտ զգացումը, ցեղական ձգողութիւնն, արեան ձայնը. այս ամենը կը ճմլէին իր դառնութեամբ լի հօգին:

Ալ չէր կրնար դիմադրել. ալ չէր կրնար հանդիսատես ըլլալ արիւնալի ոճիրներու: հետեւաբար իրիկուն մը հետեւեալ որոշումը տուաւ ինքնին:

—Նախ՝ ապահով միջոց մը գտնել սա կեաւութիւնը աղջիկն ազատելու համար. յետոյ վերջնականապէս մարելու աշխատել այս գարշելի ապարանքին լոյսը...:

Այս որոշումը յայտնեց Նուրիմէյին:

(Շարունակելի)

ըստ լաթերով կապեց: Բայց ժամ մը հազիւ անցաւ... Ահա մանկամարդ աղջիկը դողդղալ սկսաւ...: Գլուխը կախուեցաւ կուրծքէն վար, օտքերը թեկցան, աչքերը միթին ու սարսուղի երեւոյթով մը յանկարծ գոցուեցան, չրթունքները պրկուեցան ու կիսովին երեւան բերին անոր սատափին նման ակունքներու շարքը, կուրծքը բարձրացաւ ուռեցքով մը եւ ամբողջ մարմինը թալկացումը մը մէջ հետզհետէ տարտղնած ու ջանքախուած կերպարանք մը առաւ...: Զահրուժար ոչ եւս էր...: Ապարանքէն դուրս, այն նոճինքով ու եղեւնի ծառերով լի աշխարհէն մէջ, որուն մարդիկ գերեզմանառուն կըսեն, հանդարտ ու անխո՛ղջ թուն մը քնացաւ լլկուած աղջիկը: Օ՛հ, հազիւ տասներկու տարին լըքացուցած, հազիւ իր կեանքին փթթելու մօտ կոկոնը գեղեցկացուցած, հազիւ ամփոփուած հմայքէ մը դուրս ե-

լած, հնա վատի մը ձեռքով առեւանգուած եւ փառայի ապարանքը բերուած էր: Գազանարարոյ փաշան, առանց խղճահարուելու, առանց անոր ֆիզիքական նկարագիրն ու կազմուածքը նշկատի առնելու, լլկած էր գինքը, չարչարած էր... ամեն գինքի իր հաճոյքներով, իր անասնական կիրքերուն, իր գարշութեանց ու մանաւանդ իր եպիւրելի մոլութեանց առարկայ ըրած էր: Մանկատի աղջիկը հանդուրժած էր... այո՛, հանդուրժած էր աւելի քան չորս ամիս... Յետո՛յ... Ո՛հ, զանալը հասած էր իր ոսկորին ու անկարող եղած էր այդ իրէջային լլկութեան մէջ ապրիլ: Ուրեմն ի՞նչ ընէր. ո՞վ պիտի ազատէր գինքը. ո՞վ պիտի ըլլար իր կեանքին բարեբար հրէշտակը: Ո՛չ մէկը... Աստուծոյ վրայ անգամ յոյս զնելու

գաղափարէն հրաժարած էր: Ու օր մըն ալ, երբ Ասորի խէնէշ աղջկան սենեակը գացած էր, անկից իմացան Չէրքէշ Զիւլֆիին անձնասպանութիւնը: Այդ աղէտալի օրը զարթեցուց իր մէջ սե՛ւ ու քառմեկի որոշում մը...: Առանց քննելու, առանց դատելու վճռեց հետեւել այն աղջկան որուն արիւնը կը կրէր իր երակներու մէջ: Ահա բոլորը...: Ու Զահրուժար անձնասպան կըլլար իր կուրծքին մէջ վեցհարվածի մը գնդակը միեւնով: Այս բոլորը կը կատարուէր, երբ փաշան քննական պտոյտ մը ընելու գացած էր: Երկու շաբաթէն ետքը փաշան վերադարձաւ: Բացի բժիշկէն ու ապարանքին ծառաներէն, ոչ մէկը գիտէր եղեւնութիւնը հետեւաբար վեղիբը նկատողութեան անգամ առնելու չը գարկաւ ապարանքին ոճիրը:

ընտրուած է Յ. Ն. Աթաբեկեանը, Գրանձակէն ընտրուած է Ստեփան Տէր-Աւետիքեանը:

— Պատենի Զայնի Հայրենակցի խմբագրատունը գրաւելու համար մեծ կռիւներ պատահած են Վեր. Հնչակեաններու մէջ. ստորկանութիւնը միջամտած է ընդհարման վայրկեանին:

ՆԱՍՏԱՆՈՒՓ



Վասթա (եգիպտոս) Տ. Տիրան Մի-քայէլեան. — Ձեր հանգուցեալ եղբայրը՝ որուն ժառանգութեանը դուք տիրացաք այսօր, դանձած է Ողէքսան գրիոյ մեր բաժանորդներէն 50 ֆր., ինչ որ կը վկայեն թէ վճարողները եւ թէ պանդոկապետ Ս. Շաքարեանը, Դուք յուս կը մնաք մեր Համակնե-րուն հանդէպ: Հոս ձեր գուղեկը այսինքն Երկանեան փաստաբանին անհորապատ որդին՝ ձեզ փոխանորդարար եղբորդ պահանջները դանձելով հանդերձ, փախուստ կուտայ պարտքն ալ մեզ վճարել, սա առարկու թիւսը թէ ձեզմէ չէ արտօնուած. մինչդեռ իր միջոցաւ այդ գանձութիւնը յանձնարարութիւնը եղբորդ բրած է ինքն եւ ինքզին-տակ է անոր այդ պարտքին:

Ձեր եւ Հրանդի դէմ ուրիշ միջոց-ներու գիմելէ առաջ քիչ մըն ալ պի-տի սպասենք որ մեզ գոհացում տաք:

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Հակառակ կրկնակի հրաւերներու, անձեալ կերակի օրուան տարեկան ընդհ. ժողովին անդամներու մեծա-մասնով թիւնն չը գոյացաւ. որով կա-նոնադրի տրամադրութեան համաձայն որոշուեցաւ հետաձգել:

Վարչութիւնս կրկնողէ ընթերցա-բանի յարգոյ անդամներէն վաղը, կի-րակի (13 փետր.) կէս օրէ վերջ ժամը ճիշտ Ձին հաւաքուի «Սաէտինէի» սրահը:

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Հաշուետուութիւն ներկայ վար-չութեան:

Բ. Խորհրդակցութիւն կանոնադրի մասին:

Գ. Ընտրութիւն նոր վարչութեան:

Ի գիմաղ Հայկ. Ընթ. Վարչ. Ատենադպիր Ատենապետ Ա. ՍԻՆԵՄԵԱՆ Ա. ԳՈՍՍԱՊԵԱՆ

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐԻՈՒ

Եւսուորձագ իլէթի ճիտտե-տէ տէվալ իթմէքտէ օլուպ, կիթ-տիքճէ քէսպի շիտտէթ իթմէք-տէ տիր, կիւնտէ պէշ քիշի թու-թուլիյոր: Հաճըլարա սիյարէթ իթմէթիշ տիր:

Մարիւմ օլտըր իւզրէ, ճիտտէ շէհրի Մէքքէ վէ Մէտինէ շէ-հիրլէրին իսքէթսի օլուպ, հա-ճըլար հէր հալտէ ճիտտէտէն կէշմէկէ մէճպուր տըրլար:

— Սուլթան Համիտին սէվկի-լիսի օլան խապիսի մէշհուր Փէ-

հիւմ քաշա թանթանալը սուրէթ-տէ Պուրսա հիւքիւմէթինտէն գապուլ իտիլմիշ վէ Վալիտէն անա պիր թըրէն թախսիս օլուն-մուշ օլուպ, շիմտի Պուրսայա բէք եագըն մահէլտէ սաթըն ալտը-զը պիր պէօլիլկ գօնապտա սա-գին օլուպտա արը: Անըն մա-յէթինտէ պուլընալարտան 148 քիշի Սթանպօլտան սիւրիւլիւպ քէնտի ասըլ վաթանյարրնա կէօն տէրիլտիլէր:

Փէհիւմ թահթը մուհաթէմէյէ ալմագ էֆէքտարընը վիւքէլա մէճ-լիսի ղէտտ իթտի, զիրա Փէհիւմ Սուլթանըն քէնտի էվ խատէմէ-սի օլտըր կիպի՝ Երլտըգտան էմր օլընան պիր չօգ ճիւնայէթէրէ շէրիք օլտըրընտան՝ պիր թագըմ կիլլի գաբագըլ ֆաճէալար մէյ-տանայ չըգաճագ վէ իշ թա Սուլ-թանա գատար պէլքի տալանա-ճագ րտը:

— Պալտատտա, Պասրաստա վէ Մուսուլտա թիւրք ասքէրլէ-րին հալի բէք բէք միւճիպի թէէսիւֆ տիր: Օրտու հէր շէյ-տէն մահրում գալմըշ տրր: Օն-լարա եարտըմ կէնտէրմէք իշիւն Պալը Սէրասքէր թէտպիրլէր էլէ ալիյոր:

Տիկէր թարաֆտան Մուսուլա էմիր վէրիլտիլէր ամքէր հէր նէ հալաէ պուլընուրսա պուլընուրս Սճէմ վէ իւրիւք հիւքիւմէթլէրի պէյնինտէ միւնաղաալը օլան մա-հէլէ վէ Լահիճանտա Բիւզէվէթ մէվգըլընա եէնի ասքէր եօլա-նըլըն:

— Լիբանանտա վէ ճիվարտա Պէրուլթա գատար իսլամլարըն ուլիւնսըլ հարէքէթլէրինտէն տօլալը էլիլէր միւտալէլէյէ մէճպուր օլաճագ կէօրիւնիյոր: Լիբանան վալիսի Միւլիւրիւս բա-շա Սթանպօլա կէլմիշ տիր պու-ահվալտան տօլալը իշլահաթ վէր-մէք իշիւն: Գարըըլըլըք իտա-րէի հիւքիւմէթին ֆէնալըղըն-տան իլէրի կէլմիշ կէօրիւնիյոր:

— Մաքէթոնիատա Գիշէվօ գա-զասընտան Սէլիանօվըն գըղընը գաշըրմըշ օլան թիւրքլէրին ճէ-զալանմալարընը էվրօբալը սիվիլ անէնթլէր Հիլմի բաշատան թա-լէպ իթտիլէր: Պու 17 եաշընտա պուլընան կէնճ գըղ էվինէ թէս-լիմ օլունտու, վէ միւճրիմլէրի ճէզալամագ իշիւն Հիլմի բաշա էմին վէրտի:

Փաղաթ Անատօլու գըթասըն-տա չօգ տէֆալար թիւրքլէր վէ քիւրտլէր թարաֆընտան էրմէնի գըղլարը գաշըրմագտա իքէն, էվրօբալըլարտան քիմսէ սահա-պէթ իթմէյոր:

— Քէօըրիւլիւ գաղասընտա Ըս-թարիկրատ քէօյիւնտէն 4 պուլ-կարլար պիր սըրպ չէթասընտան գալտըրըլմըշլար:

— Բոււմ բաթրիգի Մաքէթո-նիանըն իւշ վիլայէթլէրինտէրի բոււմ տէսըթլարընա վէ պէօ-

յիւքլէրինէ պիր սիւքիւլէր եօլ-լալուպ, բոււմ քիլիսէսիւնին տիւշ-մանլարընտան գալտըլմուշ օլան տուգազտան սագընմալարընը թախսիյէ իտէյոր: Պու սիւքիւլէր Պուլկարլարը վէ Ուլահլարը կէօս-թէրմէք իսթէյոր, վէ եէնի տիւշ-մանլըլար պաշլալաճաղընըն իւք նիշանը ատտ օլընապիլիր:

— Պէյրուլթ վալիսի Պապը Ա-լիյէ թէլէկրաֆ վէրուպ, իսլամ-լարըն վէ խրիսթիանլարըն սի-լահլանտըղընը պիլտիւրէրէք, թալիմաթ իսթէտի վալի չու-գարըըլըլըգտա ինկիլթէրանըն բարմաղընը հրսս իթտիլմէք իսթէյոր:

ՏԱԽԻԼԻԷ

Փէխաւ. Բւէնս Փէրտինանտ հազրէթլէրինին Պուլկարիաթա ալտէթի 10 կիւն տահա լիքէլիւր օլընաճագ տրր:

— Փէտրուար 16տա Սօյրանիէ աշըլմըշ օլուպ, 260 միլիոն ֆր-րանկըլք եէնի իսթիգրալ իշիւն միւզէքէրէ օլընիյոր: Պու եէնի իսթիգրալը 1888, 89 վէ 92 սէ-նէլէրին իսթիգրալարը պիրլէշ-մէքտէն մատտա եալընըլ 60 միլիոն ֆրանկ Պուլկարիաթա կի-րէճէք տիր:

Շիմտիյէ գատար Պուլկարիա սէնէտէ 14,700,000 ֆրանկ ֆա-լիլ էօտէրիտի, պուլտան պէօլլէ 13,800,000 ֆր. էօտէլէճէք իսէ-տէ, 30 սէնէ եէրինէ 60 սէնէ էօտէմէյէ մէճպուր օլիյոր: Պու տէֆա թրանսա Ալմանիա, վէ Ա-ւստրիա պանգալարընտան իս-թիգրալ օլընիյոր: Էմիսիտը 83 օլաճագ:

— Եէնի ասքէրլէր Մարա 1տէ գաղարմալա կրտէճէքլէր:

ՐԱԻՍԻԱ

Չարսքօէ-Սէլոյա եագըն պիր շախս չըմէնտրֆէր խաթթը լա-թընա պիր պոպա սանտըղը եէրլէշտիլմէքտէ իքէն կէօրիւլ-միւշ վէ գաշմըշ տըր: սանտըգտա 3 պուլուք բուլթ տինամիթ վար ըմըշ:

— Սալը կիւնէ գատար Տուճա ալալարընըն ինթիսապաթը 448 մէպուսա պալիլ օլմուշ տըր: Բէս-մի սթաթիսթիքէ կէօրէ, պուլ-լարտան 85ի մօնարշիսթ, 276սը սօլ գօլտան եանի պուլըլարտան 72սի գատէթ, 58ի սօսիալիսթ տէ-մօկրատ, 11ի սօսիալիսթ իլսթի-լալը վէ 38ի սալիթ թէֆրիգա-լարա միւսուպ:

— Ինկիլիլ կաղէթալարը Մա-քէթոնիա իշիւն սիւհալէ միւ-տալէլէ օլընմասընը տէվլէթլէ-րէ թէլիլիլ իտէյորլար: Բուսիա-նըն րէսմի կաղէթասը պու էֆ-քեարա գարըն եաղուպ, Աւստրիա վէ Բուսիա վասիթասը իլէ պաշ-լանմըշ օլան իսլահաթ էլի սէ-մէրէ հասըլ իտէյոր տէյոր:

ՓՐԱՆՍԱ

Բաբա թրանսըլ րահիպլէրտէն 3 եպիսկոպոսը հուզըրընա գա-պուլ իտուպ պէյան իթտի քի՝ թրանսա հիւմէթի իլէ ուղաշ-մագ իշիւն պաշլանմըշ օլան միւ-զէքէրէ պօզուլտու վէ հիշ իւմի-տի եօգ քի ուղաշըլար:

— Թուլընաան պիր թէլէկրաֆըն պէյանը իւզրէ, «Գապիլէ» նամ հարպ վաբօրըն պիր գաղանը բաթլալուպ, չօգ թալֆալար եան-մըշլար:

— Պանքէր Օզիրիսին վասի-յէթնամէսի աշըլտր: Բասթէօր տարիլֆինուրնա 30 միլիոն ֆր-վասիլէթ իթմիշ:

ԿԻՐԻՏ

Կիրիտ միլիտիա թէլէրի իշիւն պու սըրա պիր գանուրնամէ թէրթիպ օլընմագտա տըր: Պու գանուրնամէ միւճէպինճէ, Եուլան օրտօընտան ալընաճագ 22 գապիլթլէրին գօմն-տասը ալթընտա ալթըշտրիլք քիշիլք իքի քըրգա եէրի միլիցիա թէլէլ օ-լընաճագ տըր: Իթալիալը գապիլթլէ-րին եէրինէ Մ. Սօնֆէրատտըն գօ-մանտասը ալթընտա իլլէյէն Եուլան գապիլթլէրի էլի սէմրէ պէօթլէրի վէ քէնալ շէֆէրլէրի վէ էհալի իւ-զէրինէ էլի թէլէսիւր հուսուլա կէթիւր-միշ տիրլէր:

Եէնի սէր գօմիսէր Մ. Չայմս էհա-լիալ էմիլիլթի քեմիլիլէ նայիլ օլ-մուշ տըր, վէ շիմտ Ժանքէմէլէրին թէլէրիլ իլէ մէշղուլ պուլընիյոր:

— Կիրիտա թրանսըլ հիւքիւմէթի իլթիլգա իւլ իսլամլարըն հուզըրըն մուհաֆապարըն տէրէօնալ իալէճէք-ատանըն եէնի գաուրնըն էսասիլէսիւրի թէլթիլ իթմէք հալիտէ իսլամլարըն մէնֆաթլարընա թօգալալալիլ:

ԿԸՓՆՏՈՒՈՒ

Ա. Գամ իւշիկիւն Բերկրեցի, ասկէ վեց տարի առաջ Վառնայէն Ս. Մերկիս մեկնած է: Կը խնդրուի իր հասցէն հազօրղն Նեանեալ հասցէին:

ՅՎՈՒՆԱՆԻՆ ՆԻԿՈՂՈՍԱՆԻ
սրբ. Օրֆիւն թ. 12
(Ռուսալիա) Գօնսուցիւս
1—2

ԾԱԽԻԼԻ ԳԻՐԳԵՐ

ԾԻՍԱՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
" " " " [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԸ
ՀՅՅԱԿԻՆ Երկրորդ անգամ տպագ-րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուլկար-ներու նիստ ու կաղը ու թուրքերէ կրած առաւապանք անոնց ազատու-թէնէն առաջ. Գին 50 անգիլ

ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶՈՔԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեան-քէն: Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիմէ: ՎԱՌԵԱ «Ի ր աւ ու ղ» ի խմբագ-րութեան

Одговор редакторъ А. Курбетянъ
печатница Д. Тодоровъ и С-ие —Варна